# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/50-1043421 «22» 11 2019թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
պարոն ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Ձեր գրության, կապված հայազգի անվանի քանդակագործ Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակը՝ որպես ազգային մոդեռնիզմի բացառիկ նմուշ, միևնույն ժամանակ որպես հեղափոխության խորհրդանիշ Երևանի Ռուսաստանի հրապարակում տեղադրելու առաջարկի հետ, հայտնում եմ, որ դրական ենք գնահատում առաջարկը, ինչպես նաև քանդակի տեղադրման վայրի ընտրությունը, քանի որ քանդակի տեղն ու դիրքը կապահովեն վերջինիս առավել շահեկան տեսողական ընկալումը տարածության մեջ:

Հարցի կապակցությամբ մշակվել է Երևանի ավագանու որոշման նախագիծ՝ քանդակի ձուլման և մոնտաժման աշխատանքների կազմակերպումն նախարարության կողմից հոգալու մասին նշումով:

«Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծը կներկայացվի Երևանի ավագանու քննարկմանը ավագանու առաջիկա նիստին:

Հարգանքով՝ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
Մուտք N 051 69820-19
«25» 11 2019թ.

*Գլխավոր ճարտարապետի աշխատ.*
*Հեռ. 011 514 158*